# ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ
# 1903-1974

Սփյուռքահայ գրականության հիմնադիրներից և ամենավառ ներկայացուցիչներից մեկը՝ **Շահան Շահնուրը** (Շահնուր Քերեսթեճյանը, գրական անունը՝ *Արմեն Լյուբեն*), իր մնայուն հետքն է թողել ոչ միայն հայ, այլև ֆրանսիական գրականության մեջ: Նա իր արձակ և չափածո գործերը ստեղծելիս պարբերաբար գրել է հայերեն կամ ֆրանսերեն՝ բանաստեղծական որոշ ժողովածուների համար Ֆրանսիայում արժանանալով գրական մրցանակի:

1927-1929 թթ. ընթացքում Շահնուրը գրեց *«Նահանջը առանց երգի»* վեպը, որում նա բարձրաձայնեց սփյուռքահայերի ձուլման վտանգի մասին ՝ փորձելով հասարակության ուշադրությունը բևեռել այդ խնդրին: Վեպը հայերին ուղղված ահազանգ է ու զգաստացման կոչ: Հեղինակը, վարպետորեն միաձուլելով ազգային ու սիրային հարցերը, ստեղծել է մի երկ, որում սերը չի նպաստում հայրենասիրությանը, այլ նահանջ է ապահովում այն ամենից, ինչը հայրենիք է խորհրդանշում:

Ստեղծագործությունն առավել քան արդիական է այսօր, երբ արտագաղթի մոլուցքը շարունակում է հայրենի եզերքից պոկել իր զավակներին ու տանել օտար ափեր՝ նրանց գլխին դամոկլյան սրի նման կախելով ուծացման վտանգը:

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԳՐՈՂԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

1. Վիքիդարանում գտիր և կարդա՛ Շահան Շահնուրի կենսագրությունը:
2. Դիտիր Նարինե Թուխիկյանի «Խոստովանություն» հաղորդաշարը՝ նվիրված Շահան Շահնուրին:
3. *ԳՈՒՍ* աղյուսակի միջոցով պարզիր՝ ինչ գիտեիր, ինչ էիր ուզում սովորել և ինչ սովորեցիր Շահնուրի և նրա ապրած պատմական ժամանակաշրջանի մասին:

| **Գիտեի** | **Ուզում եմ իմանալ** | **Սովորեցի** |
|---|---|---|
| | | |

4. Ստեղծիր սահիկաշար՝ ներկայացնելով գրողի ապրած ժամանակաշրջանը և նրա կենսագրությունը:

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՎԵՊԻ ԴԻՊԱՇԱՐԻ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

5. Կարդա՛ «Նահանջը առանց երգի» վեպը:
6. Ցո՛ւյց տուր ժամանակաշրջանի և «Նահանջը առանց երգի» վեպի ստեղծման առնչությունները:
7. Ցո՛ւյց տուր վեպի ստեղծման շարժառիթները:
8. Ներկայացրո՛ւ վեպի բովանդակությունը:
9. Ստեղծիր դիպաշարի զարգացման քարտեզ:
10. Բացահայտիր վեպում արծարծված խնդիրները:
11. Ներկայացրո՛ւ վեպի գաղափարը:

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՎԵՊԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

12. Վերլուծիր նահանջողների կերպարները, բացատրիր, թե ինչից էին նահանջում: Պատասխանները գրիր բացառական հոլովով:




13. Համեմատիր նահանջողների կերպարները՝ հիմք ընդունելով նահանջի աստիճանը:
14. Ներկայացրո՛ւ օտարազգի կանանց կերպարները և նրանց դերը հայ երիտասարդների նահանջի հարցում:

15. Կարո՞ղ ես հիշել օտարազգի կանաց՝ հայ գրականության մեջ ներկայացված այլ կերպարներ, որոնք բացասական դեր են խաղացել գլխավոր հերոսների կյանքում: Հիշելուց հետո լրացրու աղյուսակը:

| **Ստեղծագործությունը** | **Օտարազգի կինը** | **Հերոսի կյանքում նրա ունեցած դերը** |
|---|---|---|
| | | |

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՎԵՊԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

16. Մատնանշի՛ր վեպի լեզվաոճական առանձնահատկությունները:
17. Ընթերցելիս դուրս գրիր նահանջողների կերպարները բնութագրող մակդիրների ու համեմատությունների 5-6 օրինակ:

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՎԵՊԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԻ և ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

18. Կարծի՛ք հայտնիր այն մասին, թե ոչ լիարժեք նահանջը կարող է արդյոք նահանջից խուսափելու հիմք հանդիսանալ: Հիմնավորի՛ր կարծիքդ վեպից բերված օրինակներով:
19. Ըստ քեզ՝ վեպում արծարծված խնդիրներն արդիակա՞ն են: Կարծիքդ հիմնավորի՛ր փաստերով:
20. Կարդա՛ Շահան Շահնուրի՝ իր վեպի մասին հնչեցրած հետևյալ միտքը և բացատրի՛ր, թե ինչու է հեղինակը երազում, որ այն ժամանակի ընթացքում կորցնի գոյատևելու իրավունքը: Հեղինակի միտքը գրի՛ր արևելահայերենով:

    *«Արդարև, իմ մեծագույն փափագս այն է, որ այդ գիրքը հիննա և կորսնցնե գոյության ամեն իրավունք: Հեղինակի մը համար, որ ընկերային ախտ մը մատնանիշ ըրած է, ոչինչ այնքան բերկրալի է որքան իր գիրքին անհետացումը, իբրև ուղղակի հեգևանք ախտին բժշկումին»:*
21. Հայրենիքից դուրս ապրող հարազատիդ կամ ընկերոջդ նամա՛կ գրիր՝ փորձելով նրան ներկայացնել ուծացման վտանգը: Ի՞նչ ճանապարհներ կառաջարկես՝ կանխելու համար նահանջը:
22. T-աձև աղյուսակով ցո՛ւյց տուր վեպի դրական ու բացասական կողմերն ըստ քեզ:

| Դրական կողմերը | Բացասական կողմերը |
|---|---|
| | |